



Վաղարշակ Սամվելի Իսկանդարյանը ծնվել է 1987 թվականի մայիսի 16-ին Երևան քաղաքում:

2008 թվականին ավարտել է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարանի կիբեռնետիկայի ֆակուլտետի «Կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում» մասնագիտությունը՝ ստանալով բակալավրի աստիճան, իսկ 2018 թվականին նույն համալսարանում ստացել է Տեղեկատվական անվտանգության մագիստրոսի աստիճան: 2008-2010 թթ ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Իր մասնագիտական գործունեությունը Վաղարշակ Իսկանդարյանը սկսել է 2011 թվականից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում, որպես տեղեկատվական անվտանգության մասնագետ:

2020 թվականին նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Տեղեկատվական անվտանգության բաժնի պետ՝ ղեկավարելով բանկի տեղեկատվական համակարգերի անվտանգության և տեղեկատվական ու կիբեռանվտանգության ռիսկերի կառավարման գործընթացները:

2025 թվականին Վաղարշակ Իսկանդարյանը նշանակվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության տնօրեն՝ պատասխանատու լինելով կիբեռանվտանգության ռազմավարության մշակման և բանկի տեղեկատվական ակտիվների պաշտպանության ապահովման համար:

Վաղարշակ Իսկանդարյանը մասնակցել է որակավորման մի շարք դասընթացների Հայաստանում և արտերկրում:

Ամուսնացած է, ունի 1 դուստր և 1 որդի: